ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողի մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկ Գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի՝ 20 հատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի և գնդապետի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկը (Նկար 37) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է: Ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ: Առաջամասում կոճկվում է 7-10 մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծալվող, առաջամասում՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ երկկողմանի կպչուն ժապավեն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն ամրացնելու համար: Կրծքամասի ձախ հատվածում՝ 12 սմ լայնությամբ և 13 սմ երկարությամբ վրադիր գրպան շերտակարով, վրան՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Թևքերը՝ երկար, երկուական մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծալվող թեզանիքներով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի՝ եզրագծված իրար զուգահեռ ոսկեգույն զարդանախշով (Նկար 86): Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 175 գր/քմ ±5% խտությամբ. Փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի՝ 1050 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի,

	ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրայինծառայողների մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկը (Նկար 38) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է: Ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ: Առաջամասում կոճկվում է 7-10 մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծալվող, առաջամասում՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ երկկողմանի կպչուն ժապավեն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն ամրացնելու համար: Կրծքամասի ձախ հատվածում՝ 12 սմ լայնությամբ և 13 սմ երկարությամբ վրադիր գրպան՝ շերտակարով, վրան՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Թևքերը՝ երկար, երկուական մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծալվող թեզանիքներով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 175 գր/քմ ±5% խտությամբ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ *Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: **Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): ***Յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ****Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: *****Յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է տեղադրված լինի առանձին ստվարաթղթե արկղերում: ******Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: *******Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ

	պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	